## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Բշ. 1 Նոյ.– Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ըստ սովորութեան, Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան պատարագեց նոյն Տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Շբ. 6 Նոյ.– Ս. Եղկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Քհնյ. որ Բարիզէն ուխտաւորներու խումբին հետ ուխտի եկած էր Սուրբ Երկիր:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիւտի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ Նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Կիր. 7 Նոյ.– Գիւտ Խաչի (326): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Գիսակ Արք. Մուրատեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս թափօր, իջնելով նախ Գիւտ Խաչի այրը եւ բարձրանալով Ս. Գերեզմանին շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջ, եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը կը գլխաւորէր Պատրիարք Սրբազան Հայրը, ամպհովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի Քո Քրիստոս» շարականի երգեցողութեանէն եւ խնկարկութեանէն ետք, արարողութիւնները վերջացած Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Շբ. 13 Նոյ.– Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արք. Բաբախանեան:

Կիր. 14 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան:

Ուր. 19 Նոյ.– Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Շբ. 20 Նոյ.– Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Ըստ սովորութեան, կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյ՝ բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի եւ պարագայից հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Կիր. 21 Նոյ.– Դարձեալ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արք. Իփրանեան:

Բշ. 22 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շբ. 27 Նոյ.– Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան:

Կիր. 28 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ուր. 3 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շբ. 4 Դեկտ.– Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն գլխաւորութեամբ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան հանդիսապետեց բարերար Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի ննջեցելոց տարեկան հոգեհանգիստին:

Կիր. 5 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արք. Բաբախանեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ապա՝ 27 Հոկտ. 1999ին հայրենիքի մէջ զոհ գացած

digitised by A.R.A.R.@

ութ հերոս զաւակներուն համար մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ,

Վարչապետ-Վազգէն Սարգիսեանը
Ազգային Խորհուրդի Նախագահ-Կարէն Տէմիրճեանը
Եուրի Բախշեանը
Ռուբէն Միրոյեանը
Լէոնարդ Պետրոսեանը
Հէնրիկ Աբրահամեանը
Արմենակ Արմենակեանը եւ
Միքայէլ Քոթանեանը

անոնց մահուան քառասունքին առթիւ: Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 10 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 11 Դեկտ.– Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան:

Կիր. 12 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Շբ. 18 Դեկտ.– Նիկողայոսի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, երկու օրեր առաջ զուգադիպած Հարցն Եգիպտացւոց տօնին առիթով: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան. վերաբերումը կատարուեցաւ ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի Սեղանին վրայէն:

Կիր. 19 Դեկտ.– Բարեկենդան Ս. Յակոբայ Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան:

Դշ. 21 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Դշ. 22 Դեկտ.– Ընծայումն Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արք. Իփրաճեան:

Ուր. 24 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 25 Դեկտ.– Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Վերաբերումը կատարուեցաւ Մայր Տաճարի դասին մէջ Սուրբին նկարով կառուցուած շարժական սեղանին վրայէն:

Կիր. 26 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շբ. 1 Յուն.– Աբգարու Թագաւորին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիր. 2 Յուն.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան:

Դշ. 5 Յուն.– Պատրիարք Սրբազանը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Աթոռոյ «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ թափորով բարձրացաւ Պատրիարքարան:

Եշ. 6 Յուն.– Ս. Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբօր: (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Ս. Երուսաղէմի):

– Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառ եւ եմիփորոն զգեցած բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի պատուանդանին ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը, եւ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներուն շնորհաւորութիւնները:

Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան երկար բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: «Հայր Մեր»էն առաջ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

Ուր. 7 Յուն.– Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփաննոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան եւ Տ. Աւետիս Արք. Իփրաճեան:

Շբ. 8 Յուն.– Սրբոյն Ստեփաննոսի Նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթո-

digitised by A.R.A.R.@

ռոյս Բարեշնորհ Սարկաւագները եւ ուրարակիրները, երկու բուրվառակիր վարդապետները, մարգարտազարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռին, կատարեցին «Սարկաւագաց Հանդէսը»: Արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ս. պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Գիշերասկիզբին Ժառանգաւորաց Վարժարանի ճաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ: Խօսք առին Արման Սրկ. Մինասեան, դպրոցին Տեսուչը Սասուն Վարդանեան, սարկաւագապետ Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան, ուսուցչական կազմին կողմէն Տքթ. Կարօ Կարապետեան, եւ Հայկ Սրկ. Գազազեան: Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիչ»ով:

Կիր. 9 Յուն.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան. Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արք. Բաբախանեան:

– Գլխաւոր Առաքելոց նախատօնակին հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Բշ. 10 Յուն.– Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ. Կոմիտաս Վրդ. Ճէրպէթճեան:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր նախատօնակին նախագահելէ ետք, Ս. Աթոռոյ «Որ Էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Գշ. 11 Յուն.– Տօն Սրբոց Որդւոցն Որոտման: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը: Առընթերակայ վարդապետներն էին Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան եւ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան: Բուրվառակիր վարդապետներն էին Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան եւ Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան:

Պատրիարք Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մասունք ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս թափօրին:

Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով Ս. Աթոռոյ «Որ Էնն Էութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Պատրիարք Սրբազան Հայրը, օրհնուած նշխար բաժնեց բոլորին, փակելով շարքը Աւագ Տօներուն:

Եշ. 13 Յուն.– Իրիկնադէմին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցած «Կաղանդ»ի հանդէսին:

Ուր. 14 Յուն.– Կաղանդ. Նոր Տարի. ըստ Հին Տոմարի Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց ժամօրհնող Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան, երգելով Ս. Աթոռոյ Մաղթերգը:

Ս. Թ. Վարժարանի սաներէն մին ծաղկեփունջ ի ձեռին, գողտրիկ ուղերձ մը արտասանեց, ուր կը հայցէր Պատրիարք Սրբազան Հօր արեւշատութիւն, եւ ուր սաներ մօմ ի ձեռին երգեցին կաղանդի երգեր:

Նորին Ամենապատուութիւնը ըրաւ իր պատշաճ խօսքը եւ բաժնեց նարինջ:

Նոյն օրը Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Ընծանուէր Արք. Բաբախանեան: Պատարագէն ետք ներկաները բարձրացան Պատրիարքարան:

Շբ. 15 Յուն.– Ս. Բարսեղի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 16 Յուն.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Աւետիս Արք. Իփրաճեան:

Գշ. 18 Յուն.– Ճրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտուն ժամը 9.30ին Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ:

Ճամբու կէսին, Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ դիմաւորութեան եկած էին Պէյթ Սահուրի քաղաքապետը, Բեթղեհէմի փոխ-քաղաքապետը եւ պետական ներկայացուցիչները:

Իսրայէլեան հինգ ոստիկան ձիաւորներ ընկերացան Վեհափառ Հօր ինքնաշարժին առջեւէն եւ երկու քովերէն, մինչեւ Ռաքէլի գերեզմանը, որմէ ետք թափօրը Պաղեստինեան հինգ ձիաւորներով առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ:

Քաղաքի մուտքին Հայ Երիտասարդաց Միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, եւ յոյն Օրթոտոքս համայնքի, Սալէզեան եւ Սէյնթ Ճօզէֆ Աղջկանց վարժարաններուն, թափօրը առաջնորդեցին դէպի Ս. Ծննդեան

digitised by A.R.A.R.@

հրապարակը, ուր դիմաւորուելով Բեթղեհէմի Ընդհանուր ոստիկանապետէն, քաղաքապետէն եւ ներկայացուցիչներէն, կազմուեցաւ թափօր, միաբանութեան անդամներով եւ ժառանգաւորաց սաներով:

«Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեան թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայկական վանքը:

Ցետ միջօրէին ժամը 2-ին Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճարը եւ Ս. Այրը:

Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ կը մատուցանէ Վեհափառ Հայրապետը: Ապա բոլոր Միաբանութիւնը կը բարձրանայ Հայոց Վանք:

Գիշերուան ժամը 10ին վերսկսան արարողութիւնները:

Դշ. 19 Յուն.– Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: Կէս գիշերին, Վեհափառ Հայրապետը, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքները, ուխտի եկած եպիսկոպոսներով, եւ ընկերակցութեամբ Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասըր Արաֆաթին եւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի կ'իջնեն Ս. Ծննդեան Այրը:

Պատրիարք Սրբազանը եւ Վեհափառ Հայրապետը կու տան իրենց պատգամը: Արարողութեան աւարտին հիւրերը կը շնորհաւորեն Վեհափառ Հայրապետը եւ կը մեկնին:

Աւագ Սեղանին վրայ կը պատարագէ Տ. Սեպուհ Եպս. Չուլճեան: «Ջրօրհնէք»ի արարողութեան կը հանդիսապետէ Տ. Աղան Արք. Պալիօզեան:

Ս. Ծննդեան Այրին մէջ կը պատարագէ Տ. Աղան Արք. Պալիօզեան: Ապա բոլորը կը բարձրանան Հայոց Տեսչարան: Բակին մէջ կը կարդացուի Ս. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի բարձունս» եւ Միաբանութիւնը կը վերադառնայ Երուսաղէմ:

– Ս. Յարութեան Տաճարին մէջ Ս. Գերեզմանին վրայ կը պատարագէ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան եւ կը կատարուի «Ջրօրհնէք»ի արարողութիւն:

Արարողութիւնները կ'աւարտին Տաճարին Տեսչարանին մէջ Ս. Ծննդեան Աւետարանի ընթերցումով եւ «Փառք ի Բարձունս» երգեցողութեամբ:

Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ կը պատարագէ Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան: «Ջրօրհնէք»ի արարողութեան հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

– Կէսօրէ ետք ի Ս. Յակոբ պաշտուած նախատօնակին հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Եշ. 20 Յուն.– Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը Առընթերակայ եպիսկոպոսներն էին Տ. Աղան Արք. Պալիօզեան եւ Տ. Մեսրոպ Արք. Գրիգորեան: Բուրվառակիր վարդապետներն էին Տ. Թէոդորոս Արդ. Զաքարեան եւ Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան:

Շբ.– 22 Յուն.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ճախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաքարեան:

– Կէսօրէ ետք, Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Մեր բաժնին մէջ կատարուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ:

Կիր. 23 Յուն.– Առաւօտուն Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ Միաբանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը: Առընթերակից եպիսկոպոսներն էին Տ. Վարուժան Եպս. Հերկելեան եւ Տ. Վիգէն Եպս. Այքազեան, իսկ բուրվառակիր վարդապետներն էին Տ. Գուսան Վրդ. Ալճանեան եւ Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան: Ս. Պատարագէն ետք Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ կազմուեցաւ եռադարձ մեծ տհանդէս թափօր:

Գշ. 25 Յուն.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Դշ. 26 Յուն.– Տօն Անուանակոչութեան Տեառն: Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Տիրայր Արք. Մարտիկեան:

Դէպի վանք դարձին, Հայոց թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Պատրիարք Սրբազան հայրը նախագահեց «Տնօրհնէք»ի արարողութեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Եշ. 27 Յուն.– Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ:

digitised by A.R.A.R.@

Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շբ. 29 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրճէքեան:

Կիր. 30 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Ժամարարն եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան:

Շբ. 5 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիր. 6 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արք. Բաբախանեան:

Շբ. 12 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 13 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ճախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան որ «Հայր Մեր»էն առաջ կարդաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին առաջին կոնդակը:

Շբ. 19 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արք. Իփրաճեան:

Կիր. 20 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան:

Ուր. 25 Փետր.— Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շբ. 26 Փետր.— Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի եւ իր ծնողաց Սարգսի եւ Տիրուհւոյ եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

— Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը - կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն:

— Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեսցէ»ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Կիր. 27 Փետր.— Տեառնընդառաջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 4 Մարտ.— Իսահակայ Պարթեւի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 5 Մարտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաջանեան:

Դշ. 8 Մարտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 9 Մարտ.— Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն (Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ազգային):

— Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Տ. Գուսան Վրդ. Ալճանեան: Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:

Ուր. 10 Մարտ.— Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորւոց Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Բագրատ Արք. Պուրճէքեան: Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ասորւոց կողմէն:

Շբ. 11 Մարտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ Խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբանկարները, Համբարձի շարականը երգուած ժամանակ, վարագուրուեցան, Պատրիարք Սրբազան Հօր, գերաշնորհ եւ հոգեշնորհ Հայրերու ձեռքով:

Կիր. 12 Մարտ.— Բուն Բարեկենդան: Փակեալ խորանին Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Դշ. 15 Մարտ.— Սկիզբն կարգաց Մեծի Պահոց: Առաւօտեան Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Արեւագալ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք «Խաղաղական»ի առաջին ժամերգութիւնը:

Եշ. 16 Մարտ.— Մեծ պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 17 Մարտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ

digitised by A.R.A.R.@

մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Շբ. 18 Մարտ.— Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան Ժամերգութիւնն ու Նախատօնակը, մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն: Թափօրապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 19 Մարտ.— Քառասնորդաց: Արտաքսման: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Թափօրականք երգեցին Այլակերպութեան շարականները:

Գշ. 21 Մարտ.— Մեծ Պահոց երկրորդ հսկումը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Հանդիսապետը եւ քարոզիչն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Եշ. 23 Մարտ.— Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ քարոզեց Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Շբ. 25 Մարտ.— Ս. Կիւրղի Երուսաղիմացւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիւրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 26 Մարտ.— Քառասնորդաց: Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Գշ. 28 Մարտ.— Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց: Քարոզիչը եւ հանդիսապետն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Եշ. 30 Մարտ.— Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետը եւ քարոզիչն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 1 Ապրիլ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 2 Ապրիլ.— Քառասնորդաց: Տնտեսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բաբախանեան:

Գշ. 4 Ապրիլ.— Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Քարոզիչն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Դշ. 5 Ապրիլ.— Միջինք: Մեծ Պահոց Միջինքին առիթով, վանական աւանդութեան համաձայն, Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեանը ապդամներուն հետ ընթրիքի մասնակցեցաւ վարդապետաց սեղանատան մէջ:

Եշ. 6 Ապրիլ.— Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետն եւ քարոզիչն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Ուր. 7 Ապրիլ.— Իրիկնադէմին, յաջորդ օրուան Քառասուն Մանկանց տօնին առիթով Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հսկման մասնաւոր արարողութիւն: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Քարոզչին էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան:

Շբ. 8 Ապրիլ.— Սրբոց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիա կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ դրուած սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

– Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանին եւ Գիւտ Խաչի Այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ Նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Կիր. 9 Ապրիլ.— Քառասնորդաց: Դատաւորին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Երկրորդ մուտքին Պատրիարք Սրբազան Հայրը, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց: Օրուան սպասարկող վարդապետներն էին Տ. Աւետիս Արդ. Իփրանեան եւ Տ. Ընծանուէր Արդ. Բաբախանեան:

digitised by A.R.A.R.@

Պատրիարք Սրբազան հայրը նախագահեց Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադաճ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Գշ. 11 Ապրիլ.– Իրիկուան եկեղեցին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետը եւ քարոզիչն էր Տ. Բագրատ Արղ. Պուրճէքեան:

Եշ. 13 Ապրիլ.– Իրիկուան եկեղեցին ի Ս. Յակոբ Հանդիսապետը եւ քարոզիչն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Ուր. 14 Ապրիլ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 15 Ապրիլ.– <u>Ս. Գրիգորի Լուսաւորչին Մուտն ի Վիրապն:</u> Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան:

Կիր. 16 Ապրիլ.– <u>Քառասնորդաց Ցայտնեան:</u> Ս. Պատարագը մատուցուեցաւ Հրէական թաղին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Գշ. 18 Ապրիլ.– Իրիկուան եկեղեցին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետը եւ քարոզիչն էր Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան:

Դշ. 19 Ապրիլ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Եշ. 20 Ապրիլ.– <u>Աւետումն Ս. Աստուածածնի:</u> Առաւօտուն Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ դէպի Գեթսեմանիի ձորը ուր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Տ. Արիս Եպս. Շիրվանեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

– Իրիկուան եկեղեցին ի Ս. Յակոբ Հանդիսապետը եւ քարոզիչն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շբ. 22 Ապրիլ.– Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթնեան:

Կիր. 23 Ապրիլ.– <u>Ծաղկազարդ:</u> Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արղ. Աթաջանեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ:

Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց եւ արմաւենեաց ոստեր: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները:

Կատարուեցաւ «Անդաստան» նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Վանք վերադարձին, Հայոց թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ զխորհուրդ» շարականը երգելով բարձրացան Պատրիարքարան:

– Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դռնբացէք»ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը, ատրնթեր ունենալով Տ. Գուսան Վրդ. Ալճանեան եւ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան, իսկ Մայր Տաճարի Աւագ Խորանին փակեալ վարագոյրին ետեւը կը գտնուէր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Տ. Աւետիս Արղ. Իփրաճեան կարդաց վարագոյրներու բացման մասնակցողներուն անունները: Կատարուեցաւ հանգանակութիւն՝ Ազունիէի Ազգային բուժարանին ի նպաստ:

Բշ. 24 Ապրիլ.– <u>Աւագ Երկուշաբթի</u> (85րդ Տարեդարձ Ապրիլեան Եղեռնի): Նահատակաց յիշատակին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Մեր բիւրաւոր նահատակներուն համար կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

– Հոգեհանգստեան Պաշտօնէն յետոյ, Տաճարի գաւիթին մէջ խռնուած բազմութեան իր սրտակցութիւնը յայտնեց Իսրայէլի կրթական նախարարը, Եօսսի Սարիտ, Հայկական Եղեռնի պատմութիւնը խոստանալով ներմուծել պետական կրթական ծրագրին մէջ:

Ապա՝ երկարաձիգ թափօրը կազմուած Հ.Ե.Միութեան եւ Հ.Մ.Ը.Միութեան սկաուտարենդյշներէ, Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէ եւ հայ հասարակութենէ, բազմաթիւ պաստառներու եւ ծաղկեպսակներու շարանով, յառաջացաւ դէպի Ս. Փրկիչ ազգային գերեզմանատունը, հանգստեան շարականներու երգեցողութեամբ: Արարայի Նահատակաց

Յուշարձանին շուրջ հաւաքուած, կարդացուեցաւ հանգստեան Աւետարան։ Յուշարձանին ոտքին զետեղուած էին ազգային զանազան կազմակերպութիւններէ եկած ծաղկեպսակներ։ Հ.Օ.Միութեան անունով խօսք առաւ Տիկ. Արշալոյս Պաղամեան։

– Նոյն երեկոյին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Եղեռնի յիշատակին սգահանդէս։ Կատարուեցան խմբերգներ, մեներգներ, ջութակի եւ դաշնակի մենանուագներ, արտասանութիւններ, եւ օրուան խորհուրդին անդրադարձով խօսողներ՝ Արիս Եպս. Շիրվանեան, Պետիկ Լեփէճեան (Հ.Ե.Միութիւն) Պետիկ Տէր–Մաթոսեան (Հ.Մ.Ը.Միութիւն), Մարալ Ճամպազեան (Ս.Հ.Բ.Միութիւն)։ Պատրիարք Սրբազան Հօր յորդորով եւ «Հայր Մեր»ի խմբական երգեցողութեամբ սգահանդէսը աւարտին հասաւ։

Գշ. 25 Ապրիլ.– Աւագ Երեքշաբթի։ Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան։

Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բաբախանեան։ Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն։ Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս։ Թափօրապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, որ տուաւ բացատրութիւններ։

Եշ. 27 Ապրիլ.– Աւագ Հինգշաբթի։ Յիշատակ Ընթրեաց։ Առաւօտուն Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատոյց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։ Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ոտնլուայ»ի սրտագրաւ կարգը, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր։ Ներկայ էին օտար բարձրաստիճան հիւրեր։ Անկլիքան եպիսկոպոսը, վերջաւորութեան շուրջա-ռով եւ ջաքալթագ ի գլուխ բարձրացաւ Աւագ խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլերէնով։

– Ժամ մը ետք, փոքր թափօր մը գլխաւորութեամբ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի այցելեց Քրիստոսի զոյգ բանտերը։ Ս. Հրեշտակապետաց վանուց գաւիթը, Ս. Ձիթենիի ծառը եւ Ս. Փրկչի կիսաւեր մատուռը։

Գիշերուան ժամը 7ին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «խաւարման կարգը»։ «Փառք ի բարձունս»էն ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ, «Յայսմաւուրքի Ամպիոնէն» քարոզեց Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

Ժամերգութեան աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի Քո Քրիստոս»ի խնկարկութիւնը։

Ուր. 28 Ապրիլ.– Աւագ Ուրբաթ (Յիշատակ Խաչելութեան)։ Կէսօրը քիչ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»։ Հանդիսապետն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան։

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր «Թաղման Կարգ»ը նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր։

Շբ. 29 Ապրիլ.– Ճրագալոյց Զատկի։ Առաւօտուն ժամը 9.15ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէն, բանալին առնուելով Աւագ Թարգման Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի ձեռքէն։

Ժամը 11.15ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ՝ Միաբանութիւնը, Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանին կնքումէն։ Յունաց Թափօրին վերջաւորութեան, մեր լուսահանը Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Յոյն եպիսկոպոսին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան ետք, դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամատրան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Պատրիարք Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց խուռներամ բազմութիւնը։ Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր։ Թափօրապետն էր Լուսահան Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան։ Մեր թափօրին կը հետեւէին, Ղպտոց եւ Ասորւոց թափօրները։

– Վանք դարձին դարձեալ սկաուտներու նուագախումբով առաջնորդուած, Միաբանութիւնը, մեր լուսահանը Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան շուրջառազգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Լոյսը ի ձեռին, Պատրիարք Սրբազան Հայրը շուրջառով, խաչ եւ գաւազանով, շարականներու երգեցողութեամբ եւ զանգահարութեամբ մտան Մայր Տաճար։

Պատրիարք Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկուայ Աւետարանը եւ Պահպանիչով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւն Մայր Տաճարին մէջ։ Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։

digitised by A.R.A.R.@

Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Նախատօնակ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 30 Ապրիլ.– Զատիկ Յարութեան Տեառն: Կէս գիշերը երկու ժամ անց Մայրավանքի մեծ զանգը ողջի հանեց Մայրավանքի Միաբանութիւնը, որ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ եւ ուխտաւորներու խումբով մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա Ս. Գերեզմանի շրջափակը իջնելով, պաշտամունքը շարունակուեցաւ թափօրական գնացքով:

Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան»: Իսկ Ս. Գերեզմանի առջեւ «Խաչի Քո Քրիստոս» խնկարկութիւնը:

Առաւօտեան ժամը 7.30ին Պատրիարք Սրբազան Հայրը Միաբան Հայրերու հետ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Վանք դարձին հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեաւ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական հանդիսաւոր «Անդաստան»ին:

Բշ. 1 Մայիս.– Բ. օր Ս. Զատկի – Յիշատակ Մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատոյց եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Սպասարկողներն էին Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան եւ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան. իսկ բուրվառակիրներն էին Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան եւ Տ. Էմմանուէլ Արղ. Աթաջանեան:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, Միաբան Հայրեր մասունքներով դարձան եռադարձ թափօր, որմէ ետք Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը բոլորին բաժնեց նշխար:

Գշ. 2 Մայիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արղ. Իփրանեան:

Շբ. 6 Մայիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան:

Կիր. 7 Մայիս.– Նոր Կիւրակէ (Կրկնազատիկ) Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց լուսահան Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

– Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Շբ. 13 Մայիս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

8 Մայիս 2000-ին սրտի կաթուածի հետեւանքով, ի Տէր հանգեաւ Պէյ Սայտի նահատակաց Ս. Եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելքոնեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն, հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը: Որմէ ետք Հոգեւորքն երամգուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահին մէջ:

– Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, եւ մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւնն ու Նախատօնակը:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 14 Մայիս.– Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան, երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ Սրբազանը հանդիսապետեց «Անդաստան»ի արարողութեան:

digitised by A.R.A.R.@

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ուր. 26 Նոյ. 1999.– Ի նպաստ Պաղեստինի Պապական Առաքելութեան կազմակերպութիւնը իր Յիսուներորդ տարեդարձին առիթով Բեթղեհէմի մէջ կազմակերպած հանդիսութիւններուն հրաւէր ուղղած էր Պատրիարք Սրբազան Հօր։ Ռազմիկ Վրդ. Պօղոսեան ներկայ եղաւ Ս. Կատարինէ Եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին։ Իսկ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի, մասնակցեցաւ Յիսունամեակի ճաշկերոյթին, ներկայութեամբ Սրբազան Պապի ներկայացուցիչ Աքիլլէս Սիլվէստրինի Քարտինալի եւ Լատինաց Պատրիարք Միշէլ Սապահի։ Իր գնահատական խօսքին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհակալութեամբ յիշեց Պապական Առաքելութիւն գրասենեակի նպաստը ամբողջովին ասփալթապատ նորոգելով Սրբոց Թարգմանչաց Վարժարանի խաղավայրը։

Եր. 4 Դեկտ. 1999.– Քրիստոսի 2000 ամեակին առիթով, Երուսաղէմի բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու առաջին միացեալ տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Բեթղեհէմի բացօդեայ հրապարակին վրայ, ուր, մեր վանքին արեւմտեան պատին կից կառուցուած էր ընդարձակ բեմահարթակ մը։ Յայտագրին մաս կազմեցին 16 Յարանուանութեանց կրօնապետները եւ Բեթղեհէմի քաղաքապետ Հաննա Նասըր եւ Պաղեստինի իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթը պետական ներկայացուցիչներով։ Իւրաքանչիւր երգեցիկ խումբ իր լեզուով Ծննդեան երգեր երգեց. Ինչպէս նաեւ Աւետարանէն ընթերցումներ կատարուեցան։ Հրապարակը լեցուած էր տասնհազար բազմութեամբ եւ ծաղկազարդուած էր Ծննդեան լուսավառութեամբ։ Հայերէն Աւետարանը կարդաց Պատրիարք Սրբազան Հայրը եւ վարդապետներու եւ ժառանգաւորներու խումբ մը երգեց Ծննդեան երգերէն։

Հայոց վանքի Արեւմտեան պատին կողմը դուռ մը բացուեցաւ դէպի վեր ներքնասրահը, ուր քաղաքապետարանի Բեթղեհէմ 2000 ամեակի յանձնախումբը, տախտակէ սենեակներ կառոյց բեմահարթակի վրայ դերակատար արուեստագէտներուն եւ երգչախումբերուն դիւրութիւն ընծայելու համար։ Եարունակական Յայտագիրներ կազմուեցան Կաթոլիկ եկեղեցւոյ 1999 Դեկտեմբեր 24ին, Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ 2000 Յունուար 7ին, Հայ եկեղեցւոյ 2000 Յունուար 18ին Ծննդեան տօնակատարութեանց առիթով։

Դեկտեմբեր 4ի յայտագրին ընթացքին խաղաղութեան 12 աղաւնիներ ազատ արձակուեցան, եւ տեղական տարազներ հագուած մանուկներ Քրիստոսի Ծննդեան Ս. Այրէն լուցուած ջահեր հրապարակ բերին եւ ամբողջ բազմութեան ձեռքի մոմերը լուցուեցան։ Նախագահ Արաֆաթ հրապարակի վրայ կանգնուած Նոր Տարուան եւ Ծննդեան ծառի լոյսերը վառեց, ընկերակցութեամբ քաղաքապետին եւ Պատրիարք Սրբազան Հօր։

Նոյն իրիկունը, հրապարակի մօտակայ պանդոկին մէջ Բեթղեհէմի քաղաքապետի հրաւէրով եկեղեցիներու ներկայացուցիչներուն ի պատիւ տրուած հիւրասիրութեան մասնակցեցան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Համբարձում Վրդ. Քէշիշեանի եւ Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի։

Բշ. 6 Դեկտ. 1999.– Երուսաղէմի քաղաքապետ Էհուտ Օլմէրթի հրաւէրով, Հրէական Հանուքայի եւ Իսլամական Ռամազանի առիթով տրուած ընդունելութեան եւ մոմավառութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Համբարձում Վրդ. Քէշիշեանի։

Բշ. 27 Դեկտ.– Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը այցելեց Ֆրանչիսկեաններուն Քուսթոսին եւ Լատինաց Պատրիարքարան շնորհաւորելու համար Ս. Ծնունդը։

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը, Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան գացին Պապական Նուիրակին եւ Անգլիական եպիսկոպոսին։

Նոյն օրը Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց Յոյն Կաթոլիկներուն, Լուտերականներուն, եւ Մարոնիթներուն շնորհաւորելու համար Ս. Ծնունդը։

Գշ. 28 Դեկտ. 1999.– Երուսաղէմի Քաղաքապետ Էհուտ Օլմէրթի հրաւէրով կրօնապետներու ի պատիւ տրուած ճաշին մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Համբարձում Վրդ. Քէշիշեանի։

Եշ. 30 Դեկտ. 1999.– Իսրայէլի Նախագահ Էզեր Ուայզմանի կողմէ բոլոր կրօնապետներու ուղղուած Նոր Տարուան հրաւէրին ընդառաջելով, հաւաքոյթին ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Նուրհան Եպս. Մանուկեանի եւ համբարձում Վրդ. Քէշիշեանի։

4-7 Յուն. 2000.– Երուսաղէմի Յունաց Պատրիարքի հրաւէրով եւ Քրիստոսի Ծննդեան 2000 ամեակի առիթով Օրթոտոքս Ազգային եկեղեցիներու կրօնապետները մասնակցեցան Երուսաղէմի եւ Բեթղեհէմի մէջ տեղի ունեցող հանդիսութիւններուն։ Պատրիարքարանիս

digitised by A.R.A.R.@

կողմէ եւս մասնակցողներ եղան: Գշ. 4 Յունուարին, դէպի Ս. Յարութեան Տանար պաշտօնական մուտքին՝ Լուսարարապետ Նուրհան Եպս. Մանուկեան եւ Համբարձում Վրդ. Քէշիշեան: Նոյն երեկոյին, ճաշկերոյթին՝ Պատրիարք Սրբազան Հայրը, Նուրհան Եպս. Մանուկեան եւ Համբարձում Վրդ. Քէշիշեան: Դշ. 5 Յուն.– Երուսաղէմի Պէնիանէյ Հաումա կեդրոնին մէջ տրուած Մշակութային Ցայտագրին՝ Պատրիարք Սրբազան Հայրը, Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան եւ Համբարձում Վրդ. Քէշիշեան: Ուր. 7 Յուն.– Ծննդեան Տօնին առիթով Բեթղեհէմ պաշտօնական մուտքին, Ծննդեան տաճարին մէջ կրօնական պաշտամունքներուն, եւ տրուած ճաշկերոյթին՝ Արիս Եպս. Շիրվանեան, Համբարձում Վրդ. Քէշիշեան եւ Բեթղեհէմի Հայոց վանքի Տեսուչ Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Բշ. 10 Յուն. 2000.– Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը: Ապա Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց Հապէշներուն, Ղպտիներուն եւ Ասորիներուն, շնորհաւորելու համար անոնց Ս. Ծնունդը:

Բշ. 21 Փետր. 2000.– Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, ներկայ գտնուեցաւ Իսրայէլեան Քնէսէթի մասնաւոր նիստին, ի պատիւ Եւրոպայի Ազգաց Խորհրդարանի նախագահ՝ Տիկին Նիգոլ Ֆօնթէնի:

Գշ. 22 Փետր. 2000.– Միացեալ Նահանգաց Հայկական Համագումարի Ղեկավար Վարչական Անդամներէն Տիար Հրայր Յովնանեան՝ Հիմնադիր բարերար, Տիկին Գարոլին Մուկար՝ Նախագահ, Վան Գրիգորեան՝ Ատենապետ Վարիչ Մարմնի, Ռոսս Վարդեան՝ Վարիչ Տնօրէն, Ռօպերթ Գալուստեան՝ վարչութեան անդամ եւ իրաւարան խորհրդական, Տիկին Անի Թօթա՝ վարչութեան անդամ, Հայաստանէն վերադարձի ճամբով դէպի Իսրայէլ որոշ առաքելութեամբ իրենց այցելութեան առիթով, Պատրիարք Սրբազան Հօր հետ տեսակցութեան ընթացքին անդրադարձան Հայ Պատրիարքութեան հետ կապուած հարցերուն, եւ այցելեցին վանքին կրթական եւ այլ հաստատութիւնները:

Դշ. 23 Փետր. 2000.– Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, մասնակցեցան Լուտերական եկեղեցւոյ Ֆինլանտիոյ Արքեպիսկոպոս Ժւքքա Փարմայի ի պատիւ տրուած հիւրասիրութեան:

Ուր. 25 Փետր. 2000.– Ֆրանսայի Հանրապետութեան Վարչապետ Լիոնէլ Ժօսփէնի հրաւէրին ընդառաջելով, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի Ս. Աննա Եկեղեցւոյ շրջափակին մէջ տրուած հիւրասիրութեան եւ տեսակցութեան:

Գշ. 29 Փետր. 2000.– Երուսաղէմի Եբրայական Համալսարանի Հայագիտական Ուսմանց բաժանմունքի հիմնադիր եւ վարիչ Տքթ. Մայքլ Սթոնի հրաւէրով, Պատրիարք Սրբազան Հայրը դասախօսեց ներկայացնելով «Կոմիտասի Հանճարը իր երգերուն մէջէն»:

Դասախօսութիւնը կազմակերպուած էր Եբրայական Համալսարանի Հայագիտական եւ երաժշտագիտական բաժանմունքներու գործակցութեամբ: Տքթ. Սթոնի բացման խօսքէն յետոյ, Բրոֆ. Սթիվըն Գարլան, վարիչը համալսարանի Ափրիկեան եւ Ասիական բաժանմունքին, ներկայացուց Պատրիարք Սրբազան Հօր կենսագրական գիծերը: Մէկուկէս ժամուան ընթացքին Պատրիարք Սրբազան ներկայացուց Կոմիտաս Վարդապետի կեանքն ու գործունէութիւնը, անոր հիմնական գիւտերը զուտ հայկական երաժշտութեան սկզբունքներուն, քառալարի դրութեան, կշռոյթի եւ շեշտի հարազատութեան մասին, եւ մատնանշեց տասներկու երեսներ հայ ժողովուրդի կեանքէն, իւրաքանչիւրէն Կոմիտասեան երգերու նմոյշներ վերլուծելով: «Այսպիսի հանճար մը ազանդոր ոճրագործ միայն կրնայ նկատուիլ» եզրակացուց Պատրիարք Սրբազան:

Դասախօսութենէն յետոյ, Տքթ. Սթոնի հիւրասիրութեամբ, ընթրիքի սեղանի շուրջ, Համալսարանի Նախագահին – որ Պատրիարք Սրբազանին նուիրեց Ալպերթ Այնշթայնի անձնական թղթածրարներու տպագրեալ հատորը – եւ երկու բաժանմունքներէն դասախօսներու հետ մտերմիկ խօսակցութիւնը շարունակուեցաւ Հայ եւ Հրեայ ժողովուրդներու ստեղծագործութեանց կապակցութեամբ:

Շբ. 4 Մարտ. 2000.– Հունգարիոյ Բուտապեշտ մայրաքաղաքէն, Հունգարիոյ Հայ Ազգային Ինքնավարութեան ներկայացուցիչներ եւ իրենց ընկերացող «հունգարական հեռուստատեսութեան նկարահանող խումբը» Սրբոց Յակոբեանց վանքի հաստատութիւնները, սրբատեղիները, վարժարանները նկարահանելէ յետոյ, Պատրիարք Սրբազանին հետ եւս տեսակցութիւն ունեցան, նպատակ ունենալով «օտարներին ծանօթացնել» Հայ Առաքելական Եկեղեցին, 1700 ամեակի առիթով:

digitised by A.R.A.R.@

Բշ. 6 Մարտ. 2000.– Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Թէլ Ավիվի Էրեց Իզրայէլ թանգարանի մէջ ի յիշատակ Յորդանանի հանգուցեալ Հիւսէյն Թագաւորին տպուած «Թագաւորի մը կեանքը» գրքին լուսանկարներու ցուցադրութեան բացումին։ Արուեստագէտ լուսանկարիչն է Գոհրապ (հանգուցեալ Հիւսէյն Թագաւորի պալատական Լուսանկարիչը)։ Հովանաւորութեամբ Յորդանանի Ապտուլլահ Բ. Թագաւորին։

Դշ. 8 Մարտ. 2000.– Տիար Եդուարդ Նալպանտեան, Հայաստանի դեսպան Բարիզի մէջ, նոյն ժամանակ դեսպան նշանակուած է Իսրայէլի։ Պր. Նալպանտեան Պատրիարքարան այցելեց Պատրիարք Սրբազան Հօր հետ ընթրիքի սեղանակից եղաւ, եւ անդրադարձան դեսպանի պաշտօնին հետ կապուած կացութիւններու։ Յաջորդ օր, Մարտ 9ին, Պր. Նալպանտեան իր պաշտօնին հաւատարմագիրը յանձնեց Իսրայէլի Նախագահ Պր. Էզեր Ուայզմանին։

Եշ. 9 Մարտ. 2000.– Սրբոց Վարդանանց Տօնին առիթով, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, Ժառանգաւորաց Վարժարանի սաներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ մշակութային երեկոյթ մը, խմբերգի, արտասանութեան, նուագի կատարումով։ Բեմադրուեցաւ Եղիվարդի «Կարմիր Զօրավարը»։ Վարդանանց Հերոսամարտի խորհուրդի մասին արտայայտուեցան վարժարանի ներքին Տեսուչ Պր. Սասուն Վարդանեան եւ Հայկ Սրկ. Գազազեան։

Եշ. 16 Ապրիլ.– Երուսաղէմի Եբրայական Համալսարանի Հայկական ուսմանց բաժանմունքի 60 ամեակի փակման հանդիսութեանց առիթով կազմակերպուած գիտաժողովի նիւթն էր «Հայկական Ուխտաւորութիւնը դէպի Սուրբ Երկիր»։ Բաժանմունքի վարիչ տնօրէն Տքթ. Մայքլ Սթօնի հրաւէրով, դասախօսներու կարգին Երուսաղէմ այցելեց Իսթանպուլի Սրբազան Պատրիարքը, Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Արք. Մութաֆեան, որուն ի պատիւ նոյն իրիկուն Քրաուն Փլազա Պանդոկին մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ նաեւ Երուսաղէմի Սրբազան Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, որ իր գնահատանքը յայտնեց Եբրայական Համալսարանի Հայկական բաժանմունքի վարիչ Տքթ. Մայքլի 60 տարիներու նուիրեալ ծառայութեան համար։

Նուէրներու փոխանակութեան ընթացքին, Մեսրոպ Պատրիարքի հայերէն կոնդակին անգլերէն թարգմանութիւնը կարդացուեցաւ, գնահատելով Մայքլ Սթոնի եւ Համալսարանի նպաստը հայկական մշակութային, հոգեւոր եւ արուեստի ժառանգու-թեան ուսումը քաջալերելու ու տրամադրելի դարձնելու տեսակէտէն։

Մեսրոպ Պատրիարք, Ս. Տեղեաց պաշտամունքներու իր մասնակցութենէն, Միաբանութեան անդամներու եւ Թորգոմ Պատրիարքին հետ տեսակցութիւններէն եւ Միաբանական սիրոյ սեղանին ճաշակից ըլլալէն յետոյ, Պոլիս վերադարձաւ Մայիս 16, Կիրակի առաւօտ, ընկերակցութեամբ Վաղարշակ Սրկ.ի։

Եշ. 15 Ապրիլ.– Զօրավար Անդրանիկի աճիւններու փոխադրութեան առիթով, Բարիզէն Երեւան, դէպի նահատակ հերոսներու Եռաբլուրի գերեզմանատունը, Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Տեսչութեան կարգադրութեամբ, եւ մշակութային յայտագիրներու պատասխանատու Տքթ. Անուշ Նագգաշեանի ծրագրումով բեմադրուեցան Անդրանիկ Զօրավարի եւ Արցախի հերոսական պայքարին նուիրեալներու դիմանկարներն ու իտէալները։ Աշակերտները դերեր ստանձնելով, հայրենասիրական խմբերգներով եւ մեներգներով, դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Նունէ Պօղոսեանի, եւ արտասանութեամբ, ոգեւորիչ մթնոլորտ մը ստեղծեցին։

Գշ. 25 Ապրիլ.– Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց Լատինաց Պատրիարքին եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

– Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց յոյն կաթոլիկներուն, Լուտերականներուն եւ Մարոնիթներուն շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

26 Ապրիլ.– Պատրիարք Սրբազան Հայրը, Արիս Եպս. Շիրվանեան եւ Համբարձում Վրդ. Քէշիշեան գացին Անկլիքաններուն, շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

Գշ. 2 Մայիս.– Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը այցելեց Յունաց Սրբազան Պատրիարքին, Ս. Զատիկը շնորհաւորելու։

Որմէ ետք մեզի եկան Ֆրանչիսկեանները, Լուտերականները, Յոյն կաթոլիկները, Պապական Նուիրակը, Անկլիքանները, Հապէշները, Մարոնիթները, Լատինները, Ասորիները եւ Ղպտիները շնորհաւորելու համար Հայոց Ս. Զատիկը։

Դշ. 3 Մայիս.– Առաւօտուն, Յունաց Միաբանութիւնը եկաւ Հայոց Պատրիարքարան շնորհաւորելու համար Հայոց Ս. Զատիկը։

digitised by A.R.A.R.@

– Նոյն օրը, Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց Հապէշներուն, Ղպտիներուն եւ Ասորիներուն, շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

Եշ. 4 Մայիս.– Կրօնից Նախարարութենէն եւ Պաղեստինեան իշխանութեան ներկայացուցիչներ եկան Հայոց Պատրիարքարան շնորհաւորելու համար Հայոց Ս. Զատիկը։

Կիր. 7 Մայիս.– Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տքթ. Կարօ Կարապետեանի, այցելեց Ս. Եւթիմիոսի անունով վանքին նորագիւտ հնութիւնները, եւ մասնակցեցաւ Հնագիտական Վարչութեան կազմակերպած բացման յայտագրին։ Ներկայ էր նաեւ Յունաց Ամեն. Պատրիարք Տիոտորոս Ա. իր հետեւորդներով։

Երուսաղէմէն Երիքով ճամբուն վրայ, Յուդայի անապատին մէջ Ե. դարուն կառուցուած են վանքեր, խստակրօն ճգնաւորներու առանձնական եւ խմբային կենցաղի պարտադիր կանոններով։ Հիմնադիրներէն մէկն է Մելիտենեցի հայազգի Եւթիմիոս Եպիսկոպոս (377-473), որ հիմնեց «Հրաշքներու վանք» անունով ծանօթ մենաստանը 7 Մայիս 428ին։

660 Թուականին տեղի ունեցած երկրաշարժէն վնասուած, ապա վերանորոգուած վանքը գործունեայ դարձեր է մինչեւ 12րդ դար, որմէ յետոյ վանական կեանքը դադրեր է, եւ վանքը վերածուեր ճամբորդներու հանգստավայրի։

Գշ. 9 Մայիս.– Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի եւ Համբարձում Վրդ. Քէշիշեանի, մասնակցեցաւ Եւրոպայի Օր տօնակատարութեան առիթով, Եւրոպական Առաքելութեան ներկայացուցչին հրաւէրով կազմակերպուած ընդունելութեան։

Դշ. 10 Մայիս.– Իսրայէլի Անկախութեան 52րդ տարեդարձի առիթով, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս. Եպս. Շիրվանեանի եւ Համբարձում Վրդ. Քէշիշեանի մասնակցեցաւ ընդունելութեանց, Դաւթի Բերդին մէջ հրաւէրովը Երուսաղէմի քաղաքապետ Էհուտ Օլմէրթի, եւ Նախագահի բնակարանի շրջափակին մէջ Նախագահ Էզէր Ուայզմանի հրաւէրով։

digitised by A.R.A.R.@